

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

ՀՈՌՄԱՑԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ՝

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Տեսի գշտովմ՝ զԱյնարձ և տեսի՝
Ո՛չ ունեն հաշտաց՝ ո՛չ ակն համեցի:
Թօւլէն

ԲՈԼՈՐ մին ազգերու մէջ, Հռոմայիւցիք արժանի են մասնաւոր ուշադրութեան մը: Ի սկզբան՝ փոքր ու աննշան ժողովուրդ, կազմուած քարբարոս Երկրագործներէ ու հովիւներէ, գիտցաւ սակայն իր նակատագիրը դրոշմել տեւական փառքի կնիքով:

Մեծ Վեհափառութեամբ, առ իր անճն ունեցած պատկառանքով, նարափկ քաղաքական ու վարչական ամէն բանի մէջ, աներկիւղ զինուոր ու նաւաստի, առաջնն եղաւ՝ որ կազմակերպեց մեծակառոյց կայսրութիւն մը, հաստատուած բանաւոր հիմերու վրայ, առանց տկարութեան, առանց աւելորդ անգամ թութիւններու:

Իր ծնունդը, — «Գալիտենական քաղաքը» —, օժտուած մեծ եւ հաստատուն առաջնութիւններով, տոգորուած հայրենասիրական գեացումներով ու գիտակից իր արժանիքն, նախալինամութենէն որոշուեցաւ իր զէնքերը դարբնել՝ աշխարիխ տիրապետելու համար: Հռոմ՝ անոր վրայ դրա իր քարերը, իր իմաստուն եւ խոհական օրէնքները, իր դիւանագիտական

ու քաղաքական կարգերը, իր սահմանադրութիւնը, իր լեզուն, իր քսուսքակրթութիւնը, այնչափ ամուր եւ խոր, որ դեռ մինչեւ այսօր, աւելի քան քսան դար վերջ, մարդկային գործունչութեան մէջ կը նշիմարուի իր լուսաւոր ու մաքուր հետքը:

Աւունամափրել ուստի Հռոմի պատմութիւնը՝ կը նշանակէ մերտել քաղաքակրթութեան կտրած ուղին, կանգ առնելով միայն Գերմանիոյ առջեւ, ըմբուտ ու անընդունակ քաղաքակրթութեան, սիրահար իր լայնատարած անտառներու քարբարիկ կենացքն:

Աւելի քան երբէք՝ հայ ազգը պէտք ունի ինը Հռոմէն մեծ եւ ազլու դասեր առնելու: Անցեալ ու ներկայ տառապանները, որոնց մէջէն անցաւ նա տոկալով, արդիւնք են՝ ոչ եթէ «հայ ազնուական դասին» մէջ տիրոյ փարթամ կետնեցն ու համբաւուած «անմիաբանութեան» — որ ամէն դարու ազգերուն սովորական ախտերն են, — այլ դեկավարող գլուխներու պակասութեան, որ հաւասար մեր աշխարհագրական աննըպատ դիրքին՝ այնչափ ծանր կշռեցին մեր քաղցին վրայ: Հռոմի արտակարգ մեծութեան բուն պատճառն եղաւ՝ ունենալ իմաստուն վարչական մարմին մը, տոգորուած քաղաքական առաջնութիւններով:

Այս քաղաքական առաքինութիւններն

1. Մատադիր ենք Բագմակիցի էլերուն մէջ պարերար հրատարակէլ՝ դպրոցականներու համար՝ ընտիր դասերու շարքեր, Այս սկսինց Հ. Ս. Վ. Տեր-Մովսեսանի Հոռովայշեցոց պատմութեամբ:

էին՝ իմաստութիւն, խոհեմութիւն եւ ծանրութիւն, որոնց մարմնացումն եղաւ հռոմեական Ծերակոյոց, Հելեններէն անգամ կրցուած «ժողով Խագաւորաց»։ Ան բարձրացու Հռոմն իր փառքին գագաթը. անոր անկրութ' Հռոմի անկումն եղաւ։

Աւանդերով՝ «Հռոմայցեցւոց Պատութիւնը» հայ պատանիներուն՝ Վաշրուան Հայաստանի յոյսերուն, պարտը կը համարիմ յիշեցնել իրենց՝ եւ ասէն Հռոմայցեցւոց սրտին մէջ խորսաքս տպաւորուած էր կրօնքի յարգը, նայեննիքը մէզը, օրէնքի պատկառանքը, փառքի իղձը եւ ազատութեան տենչը։ Ասոնցիով եղաւ նա մեծ եւ աշխարհի պատկառելի։

Եթէ իրենց աշջեւ օրինակ չի դրի ներկայ մեծ ազգերէն մէկը կամ միւսը, պատճառն այն է՝ որ անոնք Հռոմի աւերակներուն վրայ հաստատուած, կ'ապրին դեռ անոր աւանդութիւններով։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՈՌՄԱՑԵՑԻՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԻՆ ԻՏԱԼԻԱՆ

Խոտակա. — Վերին խոտակա. — Միջին խոտակա. — Մեջն թունաստան. — Կողմներ. — Խոտակոյ կերման։

«Չոր քնորիչնեն ոքիյներէն բաժնեւով
«Ծիր ոչ սահման դրած է Ալյական յան ոչ ծով»։
Ալեքսանդր Մանուկը

ՀՈՌՄՈՇ կը գտնուի Խոտակոյ

ԻՏԱԼԻԱ կեղրոնը, և խոտակա՝ Եւրոպայի ու բոլոր աշխարհիս հոչակաւոր կերկիրներէն մէկը, զետեղուած է հին աշխարհի կեղրոնը, վասն զի Միջերկրական ծովն երկուրի կը բաժնէ։ Այս կեղրոնական զիրքն է՝ որ թոյլ տուաւ Հռոմայցիցներուն իրենց տիրապետութիւնը

տարածել Միջերկրականի բոլոր աւազանին վրայ։

Խոտակա՝ Եւրոպայի հարաւային երեք մեծ թերակղզիներէն մէկը, Յունաստանի և Ապանիոյ մէջ տեղ կ'ինայ, կը տարածուի Արքեան լեռներէն մինչև թունիուզի շրջակայցը, արևելեան կողմն ունենալով Ապական ծովը, արևմտեան կողմը՝ Տիւնեանեան ծովը՝ որով Յունաստանէն կը զատուի։ Հիւսիսէն կը շրջապատուի Ալպեանց ահավին լեռնաշղթայով և մէջ տեղէն կ'անցնի վերէն մինչև վար պարզ ու միաձեւ Ապակեան լեռներուն շղթան, Թերակղզին՝ ի բնէ երկու որոշ մասի կը բաժնուի. Յամարային կամ վերին խոտակա և թերակղզային կամ Միջին խտալիա։

Վերին խոտական կը կազմէ ՎԵՐԻՆ Պարոս (Բոյ) գետի հարուստ ԻՏԱԼԻԱ գաշտավայրը, ձգուած ԱԼ-պեանց ու Ապանինեանց մէջ-տեղը, իր սահմանները շատ որոշ և պարզ են։ Հիւսիսային և արևմտեան զին՝ Ալպեան լեռները կը զանուին, հարաւային կողմը՝ Ապենինեան լեռները, արևելեան կողմն Աղբեկան ծովը։ Դաշտավայրերն ու լեռները հոս իրարու կը հանդիպին անշփոթ կերպով։ Ալպեանց շղթան իրը 1500 թիւնութեան երկայնութիւն ունի. արևմտեան և կեղրոնական մասերուն մէջ Ալպեանը կը պարունակն Եւրոպայի ամենէն հսկայ լեռները՝ ծածկուած անհուն սառնակոյտներով, բարձրաբերձ կատարներով, որոնց մէջէն գուրս կը ցցուին Ապիակ իսր (4810 մեդր), Վարդից լեռը (4636 մեդր), Կերպինոս (4482 մեդր)։

1. Ալպեանց անցքը գիներէն նկատուած էր երբ ամեայնգուուն ձեռնարկ, այսպէս որ՝ ըսոյցն առաջին փորը կը վերաբէ Հերակլէսի կանոնին սակայն՝ գաղղներէն ժողովունդները խում իսում անցան Ալպեաններան և ատածուեցան Բոյի հովիտը, սակայ արնջութեան մէջ զանուելով լեռնէն անդին ժանկով իրենց ցեղակիցներուն հետ։ Հռոմայցիցները շատ ուշ ձևալցան անցքեր։

Այս պատկառելի լեռները կը ծառայեն իր շրջանակ աշխարհիս ամենէն աւելի արգաւանդ ու լաւ մշակուած դաշտերէն մէկուն։ Ալպեանը ծածկող յափտենական սառնակոյտներէն կը բղխին ջուրերու ճիւղաւորութիւնները, որոնց մեծ մասը լեռները ձգելէ առաջ՝ ծամածուռ անցրերով կը թափին նկարչազեղ լճերու մէջ, Այն լիճը (Լակոյ Մաճճիլու), Գոմոյի լիճը, կարտայի լիճը։ Այս ջուրերու ճիւղերէն ամենէն կարեորն է Բոն, որու ազրիւը կը գտնուի վիզոյ լերան վրայ, որ հսկայ բորգի մը նման կը բարձրանայ, միայնակ և վեհափառ, Գաղղիոյ և Խոսլիոյ մէջ տեղը։

Առատօրէն ոռոգուած բնութենէն ու մարդկային ձեռքերէ, վերին խոալիա կը վայելէ արտաքոյ կարգի բարերերութիւն մը, որով կը նայ բազմաթիւ ժողովուրդներ կերակրել։ Հին ժամանակներէ ի վեր՝ Գաղղիացիններն (կեղտերը) եկան հաստատուեցան հոն՝ դիմուած անոր ջրարրի և սիզաւէտ մարգերէն, անոր հարուստ արտերէն։

Վերին խոալիա կը բովանդակէր հին ատեն չորս գաւառ։ — ա. Լիգուրիա՝ ընդմէջ Բոյի և Լիգուրեան ծոցի, անուանի քաղաքն էր Գենուա (Ճենվա), հնուց ի վեր ծովային կարեոր նաւահանգիստ։ Հոռմայեցից բազմաթիւ գաղութներ հասատուեցին հոսւ։

— բ. Վենետիա, արևելեան կողմը, Աթէսիսի (Ատինէ), Աղրիականի և Յուլեան Ալպեանց մէջ տեղը։ Այս երկրին մէջ — որու ճիւսիսային մասը լեռնոտ է — կը բնակէին Վենետուացինները՝ Պատարոն (Բատոռա), Վերոնա, Ադրիան և Ակոյիշա վաճառաշահ ու ծաղկած բազրիններուն մէջ։ Վերջին՝ խոալիոյ ամրագոյն պատուարը դարձաւ հիւսիսային բարբարոս ազգերուն զէմ։

— գ. Գաղղիա անդրպայեան, Բոյի ճիւսային կողմը, անուանի քաղաքներն էն՝ Մետիորան (Միլան), Վերիելէ, Մանոն, Գուրիի, Բրիխիա (Պրեշիա), Քրեմնեա, Փալիա։

— դ. Գաղղիա այսրպայեան, ընդմէջ Բոյի և Լիգուրիոյ։ Ալպեանց շղթան այս գաւառն Ետրուրիային կը բաժնէր։ Կեղծական ժողովուրդները չորրորդ դարէն սկսած հոս հաստատուեցան, Բոյացինները՝ Բոյի ափերուն վրայ, Սևեննացինները՝ հարաւակողմը։ Գլխաւոր քաղաքներն էին՝ Սպինա, կառուցուած Բոյի գետափունքը, Ռուակեննա՝ Ալգիականի լճակներուն մէջ տեղ, Բևենիո (Պորենիա), Մուտինա (Մուտինա), Փարմա և Փիաչնեցա։ Այս վերջին երեցը՝ հոսմէշական գաղութներ էին։

ՄԻՋԻՆ	Բոլորովին տարրեր կազմութիւն մ'ունի Միջին ինտելիւստացիա, որ բազմածուած է մուճակի մը հիսու Հոռմայեցիք խոալիա ըսելով՝ այս մասը միայն կը հասկնային, անոր համար կը կոչուէր նաև Բոն խոալիա, և տարածուած էր Ռուրիկոն և Մակրա գետերէն մինչև Արևարոս (Սիելէ) և Փրենտոյ (Ֆորդորէ) գետերը։
-------	---

ԱԼՊԵԱՆ	Ալպենինեան լեռները Միջին խոալիան հիւսիսէն զէպ ի հարաւ կը Կարեն բոլոր երկայնութեամբ, այս շղթայէն կը բաժնուին բազմաթիւ ճիւղեր, որոնցմէտ ոմանք կը տարածուին արևելքն զէպ ի Ալգիականը, ոմանք ալ արևմուտքէն զէպ ի Տիւեննեան ծովը։ Ալպենինեանց այդ մասն երկու զառ ի թափերու կը բաժնէն, մէկը՝ հակած հարաւ-արևմուտքէն զէպ ի Տիւեննեան ծովը, բաց՝ հարաւային կիզիչ հողմերուն առջև, միւսը՝ Կոթնած հիւսիսային-արևելքէն զէպ ի Ալգիական ծովը, վայելելով բարեխառն կիմայ մը Երկրին կազմութեան պատճառաւ՝ գետերն ընդարձակ չեն։ մեծագոյններն լոնոյ և Տիւերիան են, որոնց Տիւեննեան ծովը կը թափին։
--------	--

ԵՐԿՈՒ	Երկու ծովերուն մօտ՝ և լեռներով կտրուած, խոալիոյ այս մասը բարեխառն կիմայ մ'ունի։ Ալպենինեանց ստորոտը կը գտնուին մշակուած դաշտեր ու ընդարձակ արօտներ, Բլուրները ծածկուած են պտղատու ծառերով ու այսրպայեանեւ-
-------	--

րով. կատարներն անհուն անտառներով պատուած են: Այսկայն վեսուլէն (քարձը 1280 մեդը) մինչև Առնոյ գետը հրաբրդիսյին է՝ լճերով ու ժայռերով կտրուած: Վեսով միշտ զործունէութեան մէջ է. դիտուած է՝ որ երկու գարու շրջանի մէջ երկու հազար երկրաշարժի դէպք պատահած է:

Ստորին իտալիա կը պարունակէր վեց նահանգ: — ա. Ետրուրիա, զետեղուած այսրապահեան Գաղղիոյ, Աւմբրիոյ և Ֆիւռնեան ծովուն մէջ տեղը: կը տարածուէր Մակրայի հիւսիսակողմէն մինչև Տիբերիսի հարաւային կողմը, և կը համապատասխանէ այժմեան Դոսպանա զաւառին: Այս զաւառը կը պարագրէ Առնոյ գետի բերրի հովիտը. այն մասերը՝ որ կը շրջանակին թիրունիայի (Տրասիմէն) և Պոլսենեան (Վուլմինոյ) լճերը՝ ծածկուած են պտղատու ծառերով ու այգեստաններով: Ետրուրացիները գրաւեցին այդ նահանգը, արտաքսելով Աւմբրացիներն և Տիբենացիները: Իրենց հիմնած զաշնակից տասն և երկու քաղաքներն էին՝ Կորտոնա, Արբետիոն (Ոլեցցոյ), Կրոսիոն, Փերուսիա, Վուրատերրա, Վիտորինիա (Թորրէ վէզզիա), Առուսիլիք, Վուլպինիա, Տարկուիիա, կերէ, Վեյա, Փաղերիս: Հոռմայեցւոց տիրապետութեան միջոց երևելի քաղաքներն էին՝ Լունիա, անուանի մարմարահանքերով, Պիզա, Առնոյ գետին վրայ և հին վաճառաշահ քաղաք, Փեսուիիա, Փիորենիս, Առնոյի հովտին մէջ, Պիատորիս, Լուկա, և Փերոնիա, համբաւաւոր իբր վաճառատեղի և պաշտամունքի կեղրոն՝ Փերոնիա ծաղկական դիցուհոյն, որու նուիրական անտառը մեհեանով ի միասին մօտ էին այդ քաղաքին: Հոռմայեցիք երկարատես պատերազմներէ Վերջ՝ իրենց լուծի տակն առին տասներկու ամուր քաղաքները. անոնց մէջ հաստատեցին գաղթականներ, Ետրուրիան կապելով Հոռմ քաղաքին հետ՝ Ալեքսեան, Լասիական, Փլամինիան ճանապարհուով:

— բ. Լատինա՝ Տիբերիս գետէն մինչև Ալեքս (Կարիլիանոյ). Մասիկեան և Ալ-

րանեան լեռները Հոռմի հարաւային կողմէն երեց բաղուկ մեացնելով՝ երկիրը կը բաժնեն հետեւալ կերպով. — ա. Ալբանեան լեռը՝ մեծարոյ լատին ազգերուն, վասն զի ասոր անտառին մէջ էր զումարէին իրենց զանակցութեան ժողովը: Ասոր լեռուոտին վրայ կը զանուին Ալբանեան և Նեմորեան երկու խոր և գեղեցիկ ծովալները, որոնց հիւսիսային կողմը կար Ալբանեան հին քաղաքը, ժամանակ մը գլուխ լատին զաշնակցութեան: — բ. Աղջիկոս լեռն՝ անուանի իր լեռներու շարքերով, իրեն գեղեցիկ անտառներով, ճառակաշատ վայրերով, և Աղջիկոնի երկելի զգեակով: Կարեոր քաղաքն էր Վեների՝ մայրաքաղաք Վուլկեանց: — գ. Տուակուլանեան լեռները՝ որու մօտ էր Տուակուրոն հին քաղաքը. Լեռան մանր բլուրներուն և ստորոտին վրայ կային գեղեցիկ շէնքեր և զիւղեր՝ որ կը նային Հոռմի ամենածաղկկ զաշատվայրերուն, Տիբերիսի հոսանքներուն, Անիոնի և Տիբենանան ծովոնց վրայ: Լատին ցեղերէ զատ՝ Լատինի մէջ էր բնակէին Եկուացիք, Հենիկեանք, Հուսուուշեանք և Վուլփիանք: Քաղաքներու մէջ երկելի էին՝ Խոթնարլուրն Հոռմ՝ կառուցւուանք Տիբերիս գետին երկու ափերուն վրայ, Աստիա՝ նաւահանգիստ, Տիբերիսի ձախ բլուրն, Լատինաուո՛ մայրաքաղաքը Լատինացւոց թագաւորութեան, շրջանակուած զափնիի թուփերով (ուսկից առնուած է քաղաքին անունը): Արդէն՝ զիւղաւոր քաղաք Հոռմուուլացւոց՝ որոնց կը պատկանէին նաև Անտիոք վաճառաշահ նաւահանգիստ և համբաւաւոր նաւարկութեամբ և ծովահէններով Տիբերանին, Լատինին, Ապպիկական լայն պողոտային վրայ, զարգարուած քաղմաթիւ յիշատակարաններով, գինեւէտն Անտիա (Ոլեցոյ), Արտինոն (Մարբիոսի և Կիկերոնի ծննդնավայր). ասոնց բոլորն ալ Վուլկացւոց քաղաքներն էին: — Հեռնիկացւոց երեւելի քաղաքներն էին Անագին և Փերենինուն: Լատինի մէջ կային դարձեալ Պրենեստրէ (Փալեստրիիա) առողջարար ու դին համար՝ լեցուն հովանոցներով, և

երևելի՝ թաղդի մեհենին պատգամներով։ Լատիոնի ճնագոյն և անուանի քաղաքներէն մէկն էր Տիրուր (Դիբոյի) Անիոն գետի ափին, ուր ստէպ կը յաճախէին Հռոմայցի մեծամեծները. դեռ այսօր ալ իր զարմանալի զիրքովն և հին յիշատակարաններով կը հիացնէ տեսնողներուն միաբը։

Լատիոնի կից էին Սարինացոց և Մարացոց երկրները, անտառախիտ՝ բայց առատարեր էր գինիներով և ձիթապտուղներով։ Հռոմայցեցոց դէմ մղած պատերազմերով երևելի էին Փիդիեր և Կրոստումերիոն քաղաքները, ինչպէս նաև Կուրէկու' Սարինացոց թագաւորներուն հին մայրաքաղաքը, Ռինդի, և Ամիտենոն՝ Ֆուչինոյ ճնակին վրայ։

— զ. Կամպանիա (Դերրա տի յաւորոյ), կը գտնուէր Լատիոնի հարաւային կողմը և կը ձևացնէր Տիւունեան ծովուն երկայնութեամբ նեղ զրջանակ մը։ Հողին հրաշալի քարերերովիւնը՝ ընդարձակ պարտէզի մը վերածած էր այս երկիրը. ցուրենը, զինին ու ձէթն առատ և ընտիր նն, որոնց նման գժուար է ուրիշ տեղ գտնէլ։ Գլխաւոր քաղաքներն էին Կումա, երրեմն արևմտեան Միջերկրականի մեծատուն շահաստաններէն մէկը, Նկապոյիս (Նախոյի), Պուտուլիս, բոլորն ալ յունական քաղաքներ։ Կարուրական էին Նորս և Կապուա՝ նշանաւոր իր հարստութեամբ և պերճանքով։ Վուսկացոց քաղաքներն էին Հերուուանն, Պումպա և Ստարեա (Գատղելլամարկ), որ Քրիստոսէ 79 տարի ետքը Վեսուվ հրարուղի լերան լաւայովն ու մոխրով ծածկուեր էին և 1755 տարիէն ի վեր կը փորեն ու կը քանան, կենդանի թանգարաններ ձևացնելով։

— դ. Ռւմիրիա, Ետրուրիայի և Աղրիականի մէջև. հիւսիսէն ու հարաւէն զինքը կը կտրեն Ապենինեանց մեծ զթթան. Հռվիտներն՝ ոռոգուած իտուրեկոն, Մետարուս և Սենա գետակներէն ու ծովզերներէն՝ հարուստ բուսականութիւն մ'ունին։ Ռւմիրացիները, — որ երկրիս նախկին քնակիչները Պեղասպեանները վրանտելով

հաստատուեր էին հոս, — զուրս վանուեցան Սենոնեան Գաղղիացիներէն։ Երևելի քաղաքներն են հին շահաստանն Արիմինն (Խիմինի), Պիսաւոն (Պիզարոյ), Փանում Փորտոն՝ Հոյակապ տաճարով, Սպուտին, Խմտերաննա (հայրենիք Տակիսոս պատմազրին), Խոսին՝ ուր կան նոյն մեծնին երևելի աւերակները, և որուն կամարներուն տակ գտնուեցան Եւգուրեան եօթը պղնձի տախտակները՝ եարուրացի արձանագրերով, Մետանիա (Պեվանեայ), Ամերիս (Ամելիա), Սենա Գաղղիական (Սենեկայիա)։

— ե. Պիկենոն՝ ընդմէջ Ռմբրիոյ և Սարինացոց երկրին։ Ապենինեան լեռները զինքը կը կտրեն իր արևմտեան մասին մէջ, որոնց քարձրութիւնը ծածկուած են եղենի անտառներով։ Աղրիականի եղերը գտնուող գաւառները բերքի են։ Երևելի քաղաքներն են Ալեկոն՝ գաղթականութիւն Սիրակուսացոց (394) և երևելի՝ գունագեղ ծիրանիներու արուեստանողներով ու վաճառքներու շահաստաններով, Նումանա, Ակուրոն և Ատրիա։

— զ. Սամիրոն՝ արևմուտքէն սահման ունէր Լատիոնն ու կամպանիան և արևելքն Աղրիական ծովը. այս նահանգն ամբողջապէս ծածկուած է ծառախիտ անտառներով։ Հոս կը բնակէին այլ և այլ Սարելեան ցեղեր, որոնց անուանի քաղաքներն էին Պիննա՝ Վեստինացոց քաղաց, Տեատի դղեակ Մարրուկինացոց, Կրոփինիոն, որ Հոռոմի դէմ կազմուած պատերազմներու ժամանակ կոչուեցաւ Խտաւէկա, վասն զի սահմանուած էր ժողովատեղի ըլլալ զանակցութեան ծերակուտին և Խտաւէկայոյ գլխաւոր քաղացի, Առաջնուն (Ովիդոսի հայրենիք), Բնենելինուն։ Սամիրացիները երկար ու կատաղի կոփներ մղեցին Հռոմայցեցոց դէմ՝ մինչև որ ասոնց նուաճեցին այս պատերազմասէր ազգը, անոր մէկ մասը բնաջնջ ընելով։

ՄԵԾՆ **իտալիոյ հարաւային մա-**
ԱՌԵԱՍՏԱՆ **սը, — որ իր ծովեզեր-**
ներուն վրայ հաստա-
տուած յունական գաշ-

զութներուն համար՝ Մեծեն Յունաստան կը
կոչուէք, — բոլորովին առանձնայատուկ
երկիր մ'էք: կը տարածուէք Փրեհնոյէն
ու Սիլարոսէն մինչև Յոնիական և Սի-
կուլեան ծովերը, բաժնուելով չորս նա-
հանգներու:

— ա. Ապուղիա կը պարունակէք
 Հարաւային իտալիոյ ամենէն նշանաւոր
 դաշտավայրը, լեցուն անտառներով, որոնց
 մէջ կը բնակէին վարագներու և զայլերու
 երամակներ: Կը տարածուէք Փրեհնոյ գե-
 տէն մինչև Յապիգիոնի հրուանդանը և կը
 բաժնուէք Աւգիդոս (Օֆանդոյ) գետով եր-
 կու մասի. Դաւիթիա՝ հիւսիսային կողմը,
 լեցուն նեղ ջրանցքներով և ճարակաշատ
 վայրերով (ասոր համար նշանաւոր էին
 ապուլիական եզները), Պետիտիա՝ հարաւ-
 ային կողմն և ծածկուած այգեստաններով:
 Տեղույս բնակիչներն էին պեղասացի,
 հելենացի և էին իտալացի ցեղերէն խառ-
 նուած ժողովուրդ մը՝ որու զիմաւոր քա-
 ղաքներն էին՝ Լուկերիա, Կանեէ, Վենու-
 սիա (Հայրենիք Ավրատիոսի), Ավուղոն
 Ավուղեան (Ասողի), Կանոսա, և Պարի:

— բ. Կալարդիա (Մ'հոսապիա') Տարեն-
 տոնի ծոցին ու Աղջրիականի մէջտեղ թե-
 րակղզեակ մը՝ որ հիմա կը կոչուի
 Աղջրանդի երկիր: Ամենէն աւելի երևելի
 քաղաքներն էին՝ Քրունդոսին (Պրինտիզիկ')
 նաւամուտի գէպ ի Գիրաքիոն (Գուրացցոյ),
 Տարենտոն, Մեծ Յունաստանի ամենէն
 հոյակապ քաղաքը:

— գ. Լուկանիա՝ Տիւենեան ծովուն
 և Տարենտոնեան ծոցին միջև, անուանի
 քաղաքներն էին՝ Պետոս Կամ Պոսիդոնիա,
 Սիրարիա, Վելիա (Ելեա), Հերակլեա, բո-
 լորն ալ յունական զաղութներ:

— դ. Բրուտիան, Լուկանիոյ հարաւ-
 ային կողմը, Տիւենեան և Յոնիական
 ծովերուն մէջտեղ կրոսնեկ, կոսենետա
 (Պողկեցա), Հոսկիոն (Բիեձնիոյ), Լոկրիս
 (Պուրացցանոյ) էին քաղաքներ էին:

Յունական այս ծովեզերեայ ծաղկած
 և փարթամ քաղաքները շուտով ինկան
 հօրո, բիրու ու պատերազմով ազգերու
 տիրապետութեան տակ, մինչև որ ասոնց
 ալ տերելով Հռոմայեցիները, էին բնա-
 կիչներէն մարդաթափ եղած այդ քաղաք-
 ներու մէջ նոր զաղթականներ հաստատե-
 ցին: Պետոնի մեծանին մէջ գտնուած
 հոյակապ շէնքերու աւերակ սիւները, զըռ-
 ներն և որմերը, կոյնուած գեղեցիկ գրամ-
 ներն ու բանուած անօթները, դեռ վկայ են
 այն ժամանակուան յունական զաղթակա-
 նութեանց մեծաշուրջ փառաւորութեան,
 մեծութեան և քաղաքակրթութեան:

Աշխարհագրականօրէն իւ-
 սութիւները կը վերաբերին Սի-
 կիլիս, Սարտենիա և Գոր-
 սիգա երեք մեծ կղզիները, որոնց կը
 ձևացնեն կղզային իտարիան: Հռոմայեցի-
 ները սակայն այս երեք մեծ կղզիները
 չնկատեցին երեք իրրեկ մասն իտալիոյ,
 այլ պարզապէս իրբ աշխարհակալուած
 նահանգներ:

— ա. Ակիլիիա, բաժնուած իտալիոյէն
 Մ'եսինայի նեղուցով, ահազին եռանկին
 մը կը կազմէ, որու համար կոչուեցաւ
 Տրինակրիս (Երեք ծագեան): Իր երեք գրւ-
 խաւոր կրուանդանները կը կոչուին Լիլի-
 րիս, արևմտեան դին, Փարոս, հիւսիս -
 արեելեան կողմը, Բասսարոյ, հարաւ -
 արեելեան կողմը: Արեելեան ափին վրայ
 կը գտնուի Եսման (3313 մեղր), Եւրոպիոյ
 ամենէն մեծ հրաբուղիս: Հռոմայեցոց
 ժամանակ Սիկիլիա այնչափ արգաւանդա-
 հող է՝ որ կոչուեցաւ «Ետեմարան իտա-
 լիոյ»: Նշանաւոր քաղաքները, բոլորն ալ
 գրեթէ ծովեզերներու վրայ կառուցուած,

օտարազգի գաղութներէ հիմոււած էին
 (Փինիկեցիներէ և Յոյներէ): Հիւսիսային
 ափին վրայ՝ Պանորմոն (Բալերմոյ), Հի-
 մերու (Ֆիերիիի) և Տիւենարիս (Դիւնա-
 րոյ). արեելեան եղերըին վրայ՝ Մ'եսինա,
 Գաորիմիա, Գաղանիա և Սիրակուան՝ ամե-
 նէն նշանաւորը. հարաւային ափին վրայ՝
 Գեղա (Գերրա նուովա, որ է՝ նոր երկիր),

Ակրականդ (Ճիշտենի), նախանձորդ Արքակուսայի, և Ազգինոս, արևմտեան և զերբին վրայ՝ Լիդիեն (Մարտար) և Դրէպանի (Դրաբանի):

Ավելիոյ հարաւային կողմը Կ'իյնան Մարդա և կոցոյ կղզիները, կարեոր իրենց զերբին համար. արևմտեան դին կան Եկատեան կղզիները, և հիւսիսային կողմը՝ Լիպարին կղզիները:

— թ. Մարտենիա, հին ատեն բաւական արգաւանդ էր, իսկ հիմայ վասառողջ կիմայ մ'ունի. կարեոր քաղաքն էր՝ կարարի (Գալեարի) կարքերուացոց զաղթականութին, հարաւային եղերին վրայ:

— զ. Գորսիգա՝ ընդմէջ Ետրուրիոյ և Գաղղիոյ: Բնակիչներն իրերեան ցեղէ էին և համրաւեալ իրենց վայրենի բարբերով. Կ'ապրէին իրենց հօտերով, որսորդութեամբ և վայրենի մեղուներու մեղրով: Յոյները՝ և ապա կարքեղոնացիները զաղթականութիւններ հաստատեցին: Այլիհա էր զըլխաւոր քաղաքը:

Ետրուրիայի ծովափներուն երկայնութեամբ՝ դուրս կը ցցուի Էրփա կղզին, որու երկաթի հարուստ հանքերն արդէն հին ժամանակներէ ի վեր կը շահագրծուէին: Նէսապլայ ծոցին մօտերը կան բազմաթիւ կղզիներ, որոնցմէ նշանաւորներն են Խսրիա և Լապտեա (Գարր). այս կղզիներուն գեղեցկութիւնն ու բարերերութիւնն իրենց կը քաշէին ամէն ամառ Հոռմայեցի ազնուականներ, որ այն տեղոր կառուցին բազմաթիւ ամարանցներ:

Իտալիա՝ Եւրոպայի երիտարարութանական կառավագանք կիրներուն մէջ ամենէն կուարթ ու գեղեցիկ կիրման ունի: Ջմնոք՝ շատ ցուրտ՝ բայց կարճ, ամառը՝ չոր և կիզիչ, աշունն՝ անձրեային: Այս կիման է որ ըրաւ Իտալիան զինիի, իւղի, կիտրոնի, նարնջի, նուռի, պիստակի, բամբակի, շաբարեղէզի երկիր մը: Նախնիք՝ Իտալիոյ ողին քաղցրութեամբ հրապուրուած՝ կոչեցին զայն «Դրախտ Եւրոպիոյ»: Հին Իտալացիները գերազանցապէս երկրագործ

ժողովուրդներ եղան, կերակրուելով իրենց հողէն. շատ ուշ ճարտարարուեստի և նաւարկութեան հետ ծանօթացան: Բացառութիւն կը կազմեն միայն Ետրուրացիներն ու Յոյները, բայց ասոնց ալ արդէն օտար գաղութներ էին:

Իտալիա, հակառակ իր ծովեղերներուն ընդարձակութեան, կորատուած թերակղի մը չէ, ինչպէս է Յունաստանը, ուր ծովանցնին կը հրաւիրէ ամէն կողմէ մարդկի իրարու հետ յարաբերութեան մէջ մտնալու: Բայց ի հարաւային քանի մը ծոցերէն՝ մնացած մասը միաձոյլ զանգուած մ'է, ծովեղերեայ մասերուն մէջ զրեթէ ուղղորդ: Հեղեղներու ջրատութենէ յառաջ եկած շարք մ'աւազի գօտիներու, լճակներու և մահիներու՝ կը թունաւորին բնակիչները: Հոռմի և նէսապլայ մէջն կը գտնուին Պլուտինեան ճաշիները, և շերմը (παλαιρία) ժողովուրդն կ'արտաքսէ ծովու ափերէն: Ասկէ զատ՝ իր փոթորիկներով համրաւուած Ալգրիական ծովը, և հորիզոնաւոր Ծիւնենեան ծովը նախկին փոքր ազգերու նորածին նաւաստիներուն համար գէշ ծովեր էին:

Բայց ասոր հակառակ, լիտալիան այս միաձոյլ թերակղին՝ Միջերկրական ծովն երկու աւազաններու կը բաժնէ. արևելեան կողմն ունէր ցաղացակիրթ աշխարհն և արևմտեան կողմը բարբարոս աշխարհը: Ինչպէս Յունաստանի մէջ, այսպէս ալ իտալիոյ լեռնոտ զիրքը նպաստեց անկախ պատիկ ժողովուրդներու կազմութեանը: Ասոնց մէջէն սակայն՝ զուրս եկաս մէկը, որ իմաստուն քաղացակրթութեամբ, զինուորական արժանիքով ու անտեղիտալի տոկունութեամբ՝ յաջողեցաւ իր հաւասարներուն մէջ գերակշիռ զիրքը մը զրաւել, զանոնց ընկնել, կազմակերպել և մէկ իտալիա մը ստեղծել: Օգուտ քաղելով հին աշխարհի մէջ բռնած իր բազաւոր զիրքն, իր տիրապետութիւնն տարածեց երկու աշխարհներուն վրայ: Այս մէկը Հոռմայեցին էր: Իր պատմութիւնը, — որ տաններկու դարու աւողութիւնն ունի, — ամփոփուած է նախ Հոռմի մէջ, տակաւ

առ ասկաւ կը դառնայ իտալիոյ պատ-
մութիւնը, և ապա բովանդակ աշխարհի:

ծինց են (կոչուած Արորիզինացիք - *abo-
riginis*), այսինքն՝ հոն ծագումն առած:

Ա Ա Ա

ԳԼՈՒԽ Բ.

Ի ՏԱԼԻ ՀԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Նախապատմական ժողովուրդներ. — Լիգուրիացինք. — Կրօնք. — Լիգուրիացոց բարեկարգութեան. — Սիկուլը. — Փուրութեազնանը. — Իրերացիք. — Անենացիք. — Ետրուրացիք. — Ետրուրացոց կրօնքը. — Գրութիւնը. — Ընկերույթին և բարգական կազմ. — Գիտութիւններ և գիտեր. — Ճարտարարութեան և վաճառականութիւն. — Արտեսաց. — Ետրուրացոց անկանք. — Իտալացինք. — Ասկանիք. — Լատինք. — Ունիբրացիք. — Սաբէկնեանք. — Իտալացոց բաղաբար և նկերական կազմը. — Լատինք. — Յանձնութեան և պատութեան կազմը. — Կրօնքն և պատութեան. — Յայները. — Յունանքն ազգիցները. — Գաղղրացիք վերին իտակոյ մէջ. — Գաղղրացոց բարեկարգութեան մէջ:

Իտալիա՝ կլիմայի
ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ քաղցրութեամբ, հո-
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ դին արգաւանդու-
թեամբ ու աշխար-

հազրական նպաստաւոր դիրքով, ի վա-
ղուց բնակելի գարձած է զանազան ազ-
գերու, նախապատմական շրջանի մէջ,
իտալիա հաստատուող ժողովուրդները վայ-
րենի էին, կ'ապրէին քարանձաններու և
անտառներու մէջ, կերպարուելով վայրի
պտուղներով, ու իրենց մերկութիւնը ծած-
կելով կենդանեաց մորթերով: Ասոնց մե-
տաղի գործածութիւնը դեռ չէին ճանշնար:
իտալիոյ մէջ նախապատմական ժողովու-
րդներու գոյութիւնը կը հաստատուի
ոչ միայն նորագոյն հնախօսական պե-
ղութերով, այլ նաև յոյն և լատին դա-
սական մատենագիրներով: Ասոնց գուրկ
պատմական աղրիքներէ և յիշատակա-
րաններէ, և կամ իրենց ունեցածներն ու-
ղիղ կերպով մեկնելու անկարող, կը հա-
մարէին արտառոց գաղափարով մը՝ թէ
իտալիոյ նախակին ժողովուրդներն «երկրա-

Ամենահին գաղթակա-
ԼԻԳՈՒՐԻԱՑԻՔ նութիւնը կը համա-
րուի Լիգուրիացոցը,
որոնց այն ատեն կը ծածկէին Եւրոպիոյ
ամրող արևմտեան ու կեղրանական մա-
սերը: Հաւանօրէն իրերական ծագումէ
էին, և նախարար բամնուած ցեղի մը
նահապետէն, ուսկից սերած են նաև կեղ-
տերը: Լիգուրիացիք կը բնակէին Վերին
Խոալիոյ արևմտեան կողմը, և շատ քա-
ղաքակրթեալ էին: Իրենց կ'ընծայուի նա-
խապատմական մեծաբարային յուշարձան-
ներու (monuments mégalithiques) կառուցումը: Անեկնեղը կ'աճիւնացնէին
կամ կը թաղէին: Քրիստոնէ հազար երեք
հարիւր տարի առաջ՝ պղնձէ կը ջնէին
իրենց զէնքերը, և չորս զար վերջ (900),
ծանօթացան նաև երկաթին հետ: Իրենց
աւանները՝ որ լճերու մէջ կը զըս-
ուէին՝ շինուած էին ցիցերու վրայ: Նա-
ւակները ծափի բռնէ և ամանները կաւէ
կը շինէին, կերպաս կը գործէին ու գի-
տէին պատրաստել պղնձէ փափուկ գոր-
ծիներ:

Լիգուրիացիք վերին աստի-
ԿՐՈՆՔԸ ճանի տարրական կրօնք մ'ու-
նէին: Կը կարծէին թէ բիւ-
րաւոր ոգիներ բնութիւնը կը ծածկէին:
Զիրենց ըլջապատող իրերուն և էակնե-
րուն մէջ, ինչպէս աղրիւր, ժայռ, ծառ
կամ ազուր, օծ կամ որ և է կենդանի,
իրենց համար երկրի վրայ դադար առած
ոգիներ էին, որոնց իւրաքանչիւրն իր տէ-
րութիւնն ունէր և տէր ու պաշտպան էր
տեղույն Մինչև հիմայ դեռ կան իրենց
կիսականգուն սրբարանները, ուր ըրումերն
ու քրմուկները կատղած ոգիներու բար-
կութիւնը կ'իջեցնէին, աղէտները կը փա-
րատէին, հեռուէն՝ պատերազմողները կը
քաջալերէին, զոհեր կ'ընէին, և յանախ
ալ մարդազոհեր:

ՀԻԳՈՒՐԻԱՅԻՆ
ԲԱՐՔԵՐԸ

կարձահասակ, նի-
շար, բայց չղուտ մար-
դիկ էին լիգուրիա-
ցիք: Տաժանակիր աշ-

խատութեամբ և յարատե մարզանցներով՝
զնդերային մեծ ուժ տուած էին իրենց
մարմոյն: Թաւամուրուս էին, մազերնին
երկայն և ծածանող, իսկ իրենց զգեստ-
ները վայրենի կենդանիներու և ոչիսար-
ներու մորթէ հիւսուած: Բարբով պարզ,
անխոնջ ու ժումկալ, կը մանէին կաթով,
բոյսերու արմատներով և միրզերով: Երե-
ներու և ընտանի կենդանիներու միար՝
իրենց քարուս երկրին բերքերը կը համա-
րուէին. իսկ իրը ըմպելի՝ պարիէ տեսակ մը
գարեջուր ունէին: Բնակարաննին էր փայտէ
կամ չոր քարէ շինած ողորմելի հիւղեր,
բայց շատ անգամ զիշերները քարանձաւ-
ներու մէջ կ'անցընէին: Պատերազմի միջոց
այնպէս լաւ զիտէին թարսացներու մէջ
ծածկուիլ, որ աւելի զիւրին էր իրենց
յալթելը՝ քան զիրենք գտնելը: Քաջա-
մարտիկ՝ նշանաւոր հանդիսացան իրը
պարսաւորներ: Յարձակման պահուն թշշ-
նամիին վրայ երկիւզ ազդելու համար՝
սաստիկ սուր աղաղակներ կ'արձէին:
Յանդուզն նաւաստիներ՝ անձնատոր եղած
իրենց ողորմելի նաւակներուն՝ ստէպ ծո-
վաճէնութեամբ ու նաւարկութեամբ կը
պարապէին, և իրենց աներկիւզ արշա-
ւանցներով կը յառաջանային մինչև «Հե-
րակլէսի սիմեկը»:

Լիգուրցացի կիները շատ յարգ կը վա-
յելէին. մասնաւոր հեղինակութեամբ մը
միջամուխ կ'ըլլային թէ քաղաքական վէ-
ճերու և թէ դիւանագիտական խնդիրնե-
րու մէջ: Իրենց հումկու կազմուածքով՝
կը մասնակցէին ծանր աշխատութեանց: Յա-
ճակի զաւակնին կը ծնանէին բաց դաշտի
մէջ և աշխատութեան ժամանակ: Այդ պա-
րագային նորածինը կ'ընկոմէին մերձաւոր
աղրիւրի մը չուրերուն մէջ, և իրենց վերս-
տին ձեռք կ'առնէին ընդհատուած աշխա-
տանքը: Կիներն ունէին մարդկներու կո-
րովն ու բաջութիւնը, իսկ մարդիկ՝ վայրեւ-
նի կենդանիներուն կատաղի քաջութիւնը:

Հնագոյն գաղութներէն էին
նաև Սիկուլը, ծագումով պե-
ղասգեան, և ճիւղ մը լատին
ցեղին: Ասոնց ի սկզբան բնակեցան ստո-
րին Տիբերիսի երկու ափերուն վրայ, և
յետոյ մղուելով նորեկ զաղթականներէ՝ ու
զանազան անզամներ տեղափոխուելով՝ ան-
ցան վերջապէս այն կզզին (իրը 1000
Փ. ա.), զոր իրենց անունով կոչեցին Սի-
կուլիա: Հոս արդէն կը գտնուէին Սիկա-
նացիք, որ արդի բննադատներուն համե-
մատ՝ ճիւղ մ'էին իրերական ցեղին:

Ն ախապատմական
ՓՈՒԻՉՕ- շրջանն՝ Փոիւզօ-Փիե-
ՊԵՂԱՍԳԵԱՆՑ զասգեանք, մերձաւոր
ազգական Հելլեններուն,
Փոքր Ասիայէն Եւրոպա անցնելով՝ հաս-
տառուեցան Յունաստան, և անկէ ալ
խտալիա տարածուեցան (2200 Փ. ա.):
Իրենց զօրութեան կեղրոնն էր կրան Սաս-
ոյ (Մեծ քար) երկիրը: Ասկէ հետզհետէ
տարածուեցան ներքին մասերուն մէջ,
զրաւելով և ամրացնելով քաղաքներ ու
զղեակներ, որոնց պարիսպները զեռ կը
ման մինչև այսօր, իրը հոյակապ աւե-
րակներ: Այս շինուածքները՝ զորս նախ-
նիքը կիկրոպներէ (առասպելական միա-
կանի հսկաներէ) շինուած կը համարէին՝
Յունաստանի մէջ եղածներուն հետքերը կը
կրեն: Փոիւզօ-Փեղասգեանք խտալիոյ մէջ
հիմեցին բազմաթիւ և մեծ քաղաքներ-
ումանց բնութենէ ամրացած բարձրութիւն-
ներու վրայ և ոմանց ալ գետերու: Կամ
ծովեցերներու վրայ շինուած: Նշանաւոր
էին՝ Սպինա՝ Բոյի վրայ, և Շտաւննա.
Երկուըն ալ մեծակառոյց իրենց վաճառո-
կանութեամբ: Կորտոնէ՝ Տրասմինն լճի
մօտ, Փաղերիա, Տիպուր և Փեղինա, բո-
լորն ալ կառուցուած այն վայրերուն բո-
լորտիքը, ուր յետոյ բարձրացաւ Հռոմ
քաղաքը: Փոիւզօ-Փեղասգեանց տիրապե-
տութիւնն խտալիոյ մէջ երկար կեանց
չունեցաւ: Հալածուած նախկին բնակիչ-
ներէն՝ անոնք մղուեցան դէպ ի ծով, մաս-
մ'ալ վերադարձան իրենց բնագաւառն և

մեծ մաս մ'ալ անցան դէպ ի իրերիա
(Ապանիա):

Քրիստոսէ իր 1200 տարի
ԽԲԵՐԱՑԻՔ առաջ՝ անծանօթ սերունդէ
ազգ մը՝ իրերացիք կո-
չուած¹, Ալպեան լեռներէն մտան խտա-
լիա. տակաւ առ տակաւ տէր զարձան
Աղբիականի արևելեան ամբողջ զառ ի
թափին: Յառաջացան մինչեւ իսկ հարա-
ւային խտալիա և Սիկիլիա, ուր Պեղաս-
գեանց մէկ մասը հալածելով դէպ ի Ապե-
նինեանց արևմտեան զառ ի թափը, միւս
մասն ենթարկեցին իրենց լուծին: Թէ՛ն
Ապենինեան լեռներն այս երկու ցեղերուն
սահմանագլուխներն եղան, սակայն իրե-
րացիք անցան այդ լեռներէն ու տարա-
չուած:

ծուեցան Ետրուրիա և Կամպանիա: Խտա-
լիոյ մեծագոյն մասին մէջ այս երկու ցե-
ղերն իրարու հետ ձուլուելով, մեծ ժողո-
վուրդ մը կազմեցին:

շար.

Հ. Ա. Տէր-Մովսէսուն

1. Հազար ու մէկ ենթարկութիւն եղած է իրերացոց
ծագման մասին, որոնցմէ և ո՛չ մէկ կրցած է լուծել
առեղծուածը: Ունան կը կարծէն թէ Կողկասէն եկած
ուլան, որիշներ կ'ենթարկոն որ Ակրիկէն զարթած
նն իւրապա: Յաջողաբար համարկացն՝ թէ իրերացից
արիական, սեմական և տիրենիան ազգումէ են: Փորձը
կան զանոն նոյնացնել կեզաերու հետ: Արդի զինաւ-
կաներին սմանը, Նկատի անհեռ իրերացոց զիրթ
ծայրացոյն Արմուտացի մէջ աշխատեցանեն թէ՝ Անդրկացիներէ սերած են անօնք, զարթած Եւրոպա
առասպեսական ըշշանին միջոց, երբ զեր Ալպանտեան
երկը (չիմայ ծով) իրարու կը կապէք երկու տամաց-
ները:



ՀԱՅՈՒԹ ԱՆՁՆՑ

Բարձրեանլ Աստուած. անհրապելի բարձունքներուդ քովն հասնի,
իմ եղկելի կոտրած քնարիս աղէխորով թըսթումներ:

Ցես ինչ եղաւ քու ցանկալի Եղեմային բուրաստանդ.
Լըսէ սիրով՝ հազարաւոր անմեղներու գոշինին:

Խաղողներու կըթուելուն պէս, թըշնամից զմեզ քաղեցին,
Հընծաններու մէջ նեսուեցանը, մեր արեամբ տալ քեզ զինի:

Ցես սա բաժակն, դեռ կը մըխայ. հայուն արինն նո՞ր քամուած՝
Ըլլայ շոգի, ըլլայ թող ամպ: բերէ պարարտ անձրեներ:

Ճընճըղկիկներն իսկ հագուեցան իրենց ջերմին փետուրներն,
Մինչդեռ աւաղ, մնանց ցուրտերէն կը կափկափենը յարատեւ:

Գլթա, ով մեծ Ցէր Եհովլա, նըփրական քու հօտիդ,
Եւ օրէնէնցի բիւր Ջըրվէժներ՝ վայրահոսին գոգերէդ:

Ա՛խ, ճըր պիտի, Ամենակալ, Քու բազուկըդ զօրաւոր
Պիտի կանգնէ զմեզ այս դիրքին, ու ջըլատիչ անկումէն:

Ա՛յլ մեր սըրտէն, մեր աչքերէն՝ քամուեցան դառն արցունքներ,
Ցամբեցաւ սիրտն, թառամեցան մեր զգացումներ յուսալից:

Այս ծերութեանս օրերուն մէջ, միակ իմ յոյսը դռն ես,
Արդարութիւնդ յաղթանակէ՝ թըշնամւոյն վատ գործերուն: